U 111 10.01.02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՔՆԱՐԻԿ ԱՐՄԵՆԻ

ՋԱՐԵՀ ԽՐԱԽՈՒՆԻՆ ԵՎ ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ

Ժ. 01.02 - «Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2013

© National Library of Armenia OCR by Portmind

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ՍՈՒՐԵՆ ԴԱՎԹԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ՍԱՄՎԵԼ ՊԱՐԳԵՎԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

բանասիրական գիտությունների թեկնածու
ԼԻԼԻԹ ԲՈՐԻՍԻ ՍԵՅՐԱՆՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2013 թ. ապրիլի 26-ին՝ ժամը 12.30-ին, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի հայ և արտասահմանյան գրականության 003 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ Երևան, Գրիգոր Լուսավորիչ, 15

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013 թ. մարտի 20-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
բանասիրական
գիտությունների թեկնածու՝ Ա. Մարգարյան

11-111

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Աշխատանքը նվիրված է պոլսահայ բանաստեղծ Զարեհ Խրախունու եւ արեւելահայ բանաստեղծների հետ նրա ունեցած ստեղծագործական առնչություններին:

Պոլսահայ նորագույն բանաստեղծությունը, որ հրապարակ իջավ Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո, կարողացավ վերականգնել արեւմտահայ գրականության՝ դարասկզբի իրադարձություններով պայմանավորված ընդհատված երակը եւ դառնալ նրա «հեռավոր», բայց եւ անմիջական ժառանգորդը՝ նոր գեղագիտական ու գաղափարաբանական ճանաչողությամբ:

Այս բանաստեղծությունը գրական դպրոցի արժեք ձեռք բերեց առաջին հերթին Զարեհ Խրախունու եւ Զահրատի (Զարեհ Յալտըզճյան) շնորհիվ: Նրանցից առաջինը շարժումը կոչեց «առարկայական խորհրդանշապաշտություն» եւ դարձավ նաեւ նրա նախանձախնդիր մեկնաբանը:

Մենք փորձել ենք ցույց տալ այն աղերսները, որոնք գոյություն ունեն վերջինիս եւ արեւելահայ բանաստեղծների միջեւ՝ սկսած դասական շրջանից մինչեւ նորագույն հեղինակներ (Հովհաննես Թումանյան, Վահան Տերյան, Եղիշե Չարենց, Պարույր Սեւակ, 70-ական թթ. արեւելահայ սերունդ՝ ներառյալ պարսկահայ բանաստեղծներին): Կանգ ենք առել հատկապես այն հեղինակների վրա, որոնց «հուշել» է Զ. Խրախունին: Նկատի ունենք նրա «Մայր գիծը» (1959) ծրագրային հոդվածը եւ «Բացատրութեան փորձ»երը՝ տեղ գտած «Հարցարան» ժողովածուում (2007), որոնց մեջ հեղինակը թվարկում է այն հեղինակներին, որոնցից ստացել է ստեղծագործական զգալի ազդակներ: Ի դեպ, դա առաջին հերթին վերաբերում է արեւմտահայ բանաստեղծներին՝ Դանիել Վարուժան, Վահան Թեքեյան, Մաթեւոս Զարիֆյան:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Զարեհ Խրախունու ստեղծագործական օրինակով փորձ է արվել համամասն քննության ենթարկել արեւմտահայ եւ արեւելահայ գրականությունները: Գրականագիտական այս չափումը առավել կենսական նշանակություն է ստանում մեր ներգրական պատմության պարագային, որը ճակատագրականորեն երկու հատվածների է բաժանված: Երկու գրամշակութային համակարգերի միջեւ այսպիսի համեմատական-համադրական աշխատանքը հնարավորություն է տալիս նաեւ դրանց պատմությունը դիտել մեկ միասնական պատուհանից:

Եթե պոլսահայ նորագույն բանաստեղծությունը արեւմտահայ 20-րդ դարասկզբի գրականության ժառանգորդության սահմաններում տեսնելը բնական է, արեւելահայ գրականության հետ նրա աղերսները առաջին հայացքից տարակուսելի են թվում, մանավանդ երբ անդրադարձ ենք կատարում այն հակադրությանը, որ գոյություն ուներ արեւելահայ եւ արեւմտահայ գրական աշխարհների միջեւ:

© National Library of Armenia

Բայց դա՝ միայն առաջին տպավորությամբ: Իրականում միասնական են երկու գրական ընթացքները ուղղության, շարժման տեսակետից, տարբեր՝ գրական ազդեցությունների, հետաքրքրությունների, գեղագիտական ըմբռնումների խորհուրդներով: Ուստի արեւելահայ եւ արեւմտահայ գրական շփումների քննությունը նոր, հետաքրքրիր դաշտ է բերում, ուր մեզ ուղեկցում են ճանաչողական անակնկալներ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսումնասիրության առարկան Զարեհ Խրախունու բանաստեղծական ժառանգությունն է, նպատակը՝ երեւան հանել այն առնչություններն ու ազդեցությունները, որոնք գոյություն ունեն նրա եւ արեւելահայ բանաստեղծների միջեւ: Մեր առջեւ խնդիր ենք դրել.

ա) Տալ Զարեհ խրախունու բանաստեղծական աշխարհի բնութագիրը, նրա ժառանգորդական կապը արեւմտահայ բանաստեղծների հետ (Դանիել Վարուժան, Վահան Թեքեյան, Մաթեւոս Զարիֆյան):

բ) Երեւան հանել Զարեհ Խրախունու եւ արեւելահայ դասական շրջանի բանաստեղծների առնչությունները (Հովհաննես Թումանյան, Վահան Տերյան):

գ) Ցույց տալ Զ. Խրախունու եւ նորագույն շրջանի էպիկական բանաստեղծության կապը (Եղիշե Չարենց):

դ) Պոլսահայ բանաստեղծին դիտել ժամանակակիցների հետ համեմատականներում (Պարույր Սեւակ, 70-ականների բանաստեղծական սերունդ՝ Հովհաննես Գրիգորյան, Հենրիկ Էդոյան, Արտեմ Հարությունյան, այդ թվում՝ պարսկահայ բանաստեղծներ՝ Գալուստ Խանենցի առաջնորդությամբ):

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Զ. Խրախունուն եւ պոլսահայ գրականության բնագծերին անդրադարձել են թե՛ հայրենի, թե՛ Սփյուռքի մասնագետները: Հայրենի գրականագետներից նրան գնահատել են Ալեքսանդր Թոփչյանը, Վազգեն Գաբրիելյանը, Գեղամ Սեւանը, Ֆելիքս Բախչինյանը, Սամվել Մուրադյանը, Նորայր Ադալյանը եւ ուրիշներ, ովքեր հիմնականում կանգ են առել պոլսահայ բանաստեղծի ստեղծագործական հատկանիշների վրա, փորձել ցույց տալ նրա տեղը համաշխարհային գրականության համաբնագրում: Սակայն ամենից ամբողջականը Սուրեն Դանիելյանի «Բանաստեղծության ազատագրումը. Զարեհ Խրախունի» մենագրությունն է, ուր հեղինակը մեզ համար պարզում է պոլսահայ գրական մթնոլորտը, որի մեջ ձեւավորվել է Խրախունի բանաստեղծը, նրա գեղագիտության առանձնահատկություններն ու իր բնորոշած «առարկայական խորհրդանշապաշտություն» գրական ուղղության սկզբունքները: Գրականագետի՝ գրական երեւույթները համեմատական մեթոդով գնահատելու նախապատվությունը թույլ է տվել ընդգրկուն պատկերացում կազմելու հեղինակի գեղարվեստական համակարգի մասին: Զ.

Խրախունուն Վ. Թեքեյանի, Դ. Վարուժանի, Մաթեւոս Զարիֆյանի, Հովհ. Թումանյանի, Ե. Չարենցի, Պ. Սեւակի հետ համեմատականներում դիտարկումը շահեկան նյութ է պարունակում, կողմնորոշում է նաեւ մեզ աշխատանքում:

Սփյուռքում Զ. Խրախունուն անդրադարձել են Ռոպեր Հատտեճյանը, Հիլդա Գալֆայան-Փանոսյանը, Մարկ Նշանյանը, Երվանդ Ազատյանը, Պեպո Սիմոնյանը, Լեւոն Շառոյանը, Կարո Աբրահամյանը, Արամ Սեփեթճյանը, Սարգիս Կիրակոսյանը եւ ուրիշներ:

Մեր աշխատանքում հաշվի ենք առել թե՛ հայաստանյան, թե՛ Սփյուռքի գրականագիտական փորձը եւ ձգտել ենք ցույց տալ մասնավորաբար Զ. Խրախունու եւ արեւելահայ հեղինակների ստեղծագործության առնչությունները, որոնց միջոցով նաեւ ապահովվում է հայ գրականության ժառանգորդական ընթացքը: Իհարկե, մեկ ատենախոսության սահմաններում դժվար է սպառել նյութը, սակայն շրջանցելով մասնավոր դեպքերը՝ մենք անդրադարձել ենք հիմնականում այն հեղինակներին, որոնց հետ Զ. Խրախունու ստեղծագործական կապերը ներքին շերտեր ունեն, առավել համակարգային բնույթ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքն իրականացնելիս թեմայի հետ առնչվող բոլոր նյութերը՝ գեղարվեստական գրականություն, մենագրություններ, մամուլ, կարդացվել ու մշակվել են հետազոտողի կողմից: Կազմվել է քարտարան, կատարվել նյութերի դասակարգում եւ համադրական աշխատանք:

Համեմատական գրականագիտությունը ենթադրում է համադրական եւ ժամանակագրական բազմաշերտ աշխատանք: Զարեհ Խրախունու հետ համադրանքներում կան բանաստեղծներ, որոնց հետ շփումը համադրական է, ազդեցությունները՝ խորքային հետաքրքրությունների շերտերում (Դ. Վարուժան, Հովհ. Թումանյան, Վ. Թեքեյան եւ ուրիշներ), բայց կան նաեւ գրողներ, որոնց հետ պոլսահայ բանաստեղծը ուղղակի գրական երկխոսության է անցել (Պ. Սեւակ, որոշ չափով՝ Եղիշե Չարենց, արեւմտահայ հեղինակներ):

Արեւելահայ հեղինակների հետ աշխատանքը տարել ենք երկու հիմնական մոտեցումներով՝ Զ. Խրախունու «նախորդներ» (Հովհ. Թումանյան, Վ. Տերյան, Ե. Չարենց) եւ ժամանակակիցներ (Պարույր Սեւակ, 70-ականների բանաստեղծական սերունդ): Առաջին դեպքում ազդեցությունները միակողմանի բնույթ են կրում՝ կապված հեղինակների ստեղծագործական «ժամանակների» տարբերությունների հետ: Երկրորդ պարագային գրողները ժամանակային նույն հարթության մեջ են, ուստի առնչությունները տարաբնույթ են, հաճախ անկախ հեղինակների կամքից. երբեմն դրանք պայմանավորված են ոչ թե զուտ ազդեցություններով, փոխճանաչողությամբ, այլ գրական համընդհանուր տեղաշարժերով, գրական դպրոցի նախընտրությամբ: Բնականաբար այստեղ ծանրակշիռ դեր ունեն տեսաբանական ընդհանրացումները:

© National Library of Armenia

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքը օգտակար կարող է լինել «Սփյուռքահայ գրականության պատմություն» առարկայի բուհական դասընթացի, ուսուցիչների, համեմատական գրականագիտությամբ զբաղվողների, արևմտահայ ու հատկապես սփյուռքահայ գրականության հետազոտողների համար:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքը կատարվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում: Ատենախոսությունն ամբողջությամբ քննարկվել եւ հավանության է արժանացել մանկավարժական համալսարանի հայ գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստում եւ երաշխավորվել է հրապարակային պաշտպանության: Ատենախոսության առանձին դրույթներ հոդվածների տեսքով ընթերցվել են մի շարք հանրապետական գիտաժողովներում, տպագրվել հայաստանյան եւ Սփյուռքի գիտական պարբերականներում եւ ժողովածուներում (տես հրապարակումների ցանկը սեղմագրի վերջում):

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Աշխատանքը կազմված է առաջաբանից, երեք գլուխներից (առաջին եւ երկրորդ գլուխները՝ երկու, իսկ երրորդը՝ երեք ենթագլուխներից), եզրակացություններից եւ օգտագործված գրականության ցանկից: Շարադրված է 140 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

ԱՌԱՋԱԲԱՆ

Առաջաբանում տրված է համեմատական գրականագիտության կարեւորությունը, արեւմտահայ եւ արեւելահայ գրականությունների համամասն քննության անհրաժեշտությունը, շարադրանքի մեթոդաբանությունը, նյութի ընդգրկման ծավալները, հարցի պատմությունը, ատենախոսության կառուցվածքը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
Զ. ԽՐԱԽՈՒՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Առաջին գլխի «*Պոլսահայ նորագույն բանաստեղծության հատկանիշները*» ենթագլխում տրվում է պոլսահայ ետպատերազմյան բանաստեղծության ընդհանուր բնութագիրը, գրականագիտության մեջ նրա հանդեպ ձեւավորված հակասական մթնոլորտը: Այստեղ համառոտ անդրադարձ է կատարվել Զ. Խրախունու կենսագրական եւ ստեղծագործական էջերին:

1915 թ. ողբերգական իրադարձությունները ընդհատեցին արեւմտահայ վիթխարի, «գրեթէ առասպելական դիմագծութիւն»[1] պարզած մշակույթի ընթացքները եւ անդառնալի սահմանազատումի դեր կատարեցին: Դրանց հետեւանքով արեւմտահայ գրական ոստանը՝ Պոլիսը, 1915-1923 թթ. լքեց մտավորական սերուցքը, այդ թվում՝ գրողները, Հ. Օշականի հայտնի բնորոշումով՝ «մնացորդացը»:

Միայն Երկրորդ աշխարհամարտի ավարտին՝ 1940-ականների կեսերից, Պոլսի էսայան, Կեդրոնական եւ Մխիթարյան վարժարաններին կից ստեղծվեցին Սանուց միություններ, որոնք, համախմբելով իրենց շուրջ երիտասարդ ուժերի, կարեւոր դեր խաղացին քառորդ դար տեւած ամլությունից հետո արթնացող գրական կյանքի վերակազմակերպման գործում: Այս նոր զարգացումները Զարեհ Խրախունու, Զահրատի, Ռոպեր Հատտեճյանի եւ այլոց շնորհիվ աստիճանաբար ձեռք բերեցին նախ՝ «շնչառություն», ապա՝ գրական շարժման ուրվագծեր:

Գրական «նորեկների» հավատամքը տարբեր էր նախորդների՝ բանաստեղծության արժեքը չափի ու հանգի պարտադրանքի մեջ տեսնելու մտայնությունից: Հրաժարվելով քերթվածի կազմության ավանդական սկզբունքներից՝ Զ. Խրախունին, Զահրատը փորձում էին դուրս գալ «պերճաշուք», ցցուն բառերի հանդեսից եւ բանաստեղծության դաշտ բերել առօրյան «լեցնող» մարդկանց, առտնին, բայց փիլիսոփայության եզրեր՝ ոգեկոչելով, հյուսելով ազատության, կամքի՝ փոքր-ինչ անտես մեկնակետեր՝ հաճախ նաեւ յուրացված եվրոպական մտածողության ավազանից:

Այս գրականության ձեւավորման ակունքների մասին խոսելիս անհնար է շրջանցել երկու անուն՝ Կարպիս Ճանճիկյան եւ Հայկազուն Գալուստյան, որոնք դարձան նոր քերթողության նախակարապետները եւ ուղղորդեցին նոր սերնդի հայացքը դեպի գորշ ու միապաղաղ առօրյայի վերացարկումներ:

Իրական «դիմագծություն» նոր բանաստեղծությանը հաղորդեցին Զահրատը եւ Զ. Խրախունին:

Առաջինը գրականություն բերեց «մեծ քաղաքի» մնայուն բնակչին՝ Կիկոյին: Հեգնախառն, միաժամանակ թախծոտ ոճավորումով հայտնի զահրատյան տողերն առաջին հայացքից թեեւ անհեթեթության հասնող պարզության տպավորություն են թողնում, բայց միեւնույն ժամանակ թելադրական են, անմիջական: Նա չի փիլիսոփայում, բայց ընթերցողին մղում է իմացական ընդհանրացումի.

Քերթուած մը պէտք է ըլլայ հունտի պէս
որ երբ աւարտի
չաւարտի – ծիլ տայ – վերապրի մեզի հետ[2]:

---

[1] **Համայնապատկեր հանրապետական շրջանի իսթանպուլահայ գրականութեան»** / խմբ.՝ Վ. Կոմիկեան, Վ. Ս. Ծովակ, Ռ. Հատտէճեան, Իսթանպուլ, հրատ. Արամեան Սանուց Միութեան, 1957, էջ 3:

[2] **Զահրատ**, Բանաստեղծութիւններ, հ. Բ (1990-2005), Ստանպուլ, «Արաս» հրատ., 2006, էջ 40:

© National Library of Armenia

Ինչ մնում է Զարեհ Խրախունուն, դեռեւս 1959-ին, «Թօ» հանդեսում լույս ընծայած «Մայր գիծը» հոդվածում նա բանաստեղծական այս ընթացքներում առաջինը նկատեց շարժման հատուկ ուրվագծեր եւ անմիջապես տվեց սահմանումը՝ առարկաների եւ իրերի ներքին խորհրդանիշների խաղարկման պայմանական արվեստ՝ «առարկայական խորհրդանշապաշտություն» (symbolisme objectif)[3]:

«Խորհրդանշապաշտ» բանաստեղծի համար նախասիրած կամ ոչ բանաստեղծական «շնչի» առարկաներ, հետեւաբար՝ նաեւ բառեր, գոյություն չունեն (աղաման, ծխամորճ, ափսե, աքլոր, սավառնակ եւ այլն): Իսկ մեկ առարկայի հոգեւոր դաշտի ճանաչման համար առաջարկվում են մեկից ավելի իմաստներ՝ դրանց կռահումը եւ մեկնական խորքի յուրացումը թողնելով ընթերցողին:

Առարկայական «խորհրդանշապաշտություն» գրական շարժման էությունը բխում էր կամքի եւ ազատության խորհուրդներից, որոնց սկզբունքները հրապարակ էր նետել ֆրանսիացի խոշորագույն իմաստասեր Անրի Բերգսոնը: Նա ընդունում էր կյանքի ճանաչողության երկու ակունք՝ դատողական եւ ինտուիտիվ, այսինքն՝ ներքնատեսական (շատերը այն կոչում են ներհայեցողական, ներատեսական):

Մերժելով դատողական իմացության արդյունավետությունը, համարելով այն «շահադիտական» (այսինքն՝ գաղափարականին ենթակա)՝ Ա. Բերգսոնը հակվում է իրերի ու երեւույթների ճանաչման նոր աղբյուրին՝ ներքնատեսությանը (Զ. Խրախունին նախընտրում է «յայտնատեսութիւն» բառը, l'intuition), այն դիտելով իբրեւ յուրատեսակ ինտելեկտուալ համակրանք, որը անմիջականորեն թափանցում է առարկայի մեջ եւ միաձուլվում նրա անհատական հատկանիշին: Ինտուիտիվ ճանաչողության ամենից բնորոշ օրինակը, ըստ Անրի Բերգսոնի, գեղարվեստական ստեղծագործությունն է[4]:

Սակայն վերեւում ասվածը չի ենթադրում, թե մենք գործ ունենք միայն իմացական կաղապարների հետ. թեպետ Զարեհ Խրախունին բանաստեղծությունը իմաստասիրության մոտեցնող քերթողն է, բայց չի բացառում նրա բերած հուզական հմայքը.

Պուտ մը մեղր է անապակ
Խոստումէն ալ, երազէն ալ քաղցրահամ
Որ անձրեւի ջուրով լեցուն
Առօրեայի գաւաթին մէջ կը կաթի...[5]:

*

Գրականության պատմության տեսակետից հետաքրքիր է, որ պոլսահայ նորագույն բանաստեղծությունը սկզբից եւեթ միարժեք գնահատականների չարժանացավ՝ ո՛չ սփյուռքահայ, ո՛չ հայրենի գրական շրջանակներում (Վահրամ Բարունյան, Սիրվարդ Կյուլպենկյան-Գունտաքճյան, Նուպար Ազարյան, Էդուարդ Զրբաշյան): Թորոս Թորանյանի դիպուկ հայացքով՝ «...մշակուեցաւ գրականութիւն մը, քիչ մը դասական ձեւերէ հեռու, որուն խորք աչքով նայեցան դասականութեան պահակները»[6]:

Բանաստեղծելու այս եղանակի ընդդիմախոսներից ոմանք գտնում էին, որ այն անպայմանորեն կապ ուներ թրքական գրականության մեջ ծավալվող առօրեական շարժման հետ, գտնվում էր նրա ազդեցության ոլորտում: Զուգահեռները չէին շրջանցում ֆրանսիական ու իտալական նորագույն ազդեցությունները: Եվ նրանք մասամբ ճիշտ էին: Իրականում ավանդույթի արմատը պետք էր որոնել եվրոպական՝ հատկապես ֆրանսիական գրականության ակունքներում, որ գալիս էր Պոլ Էլյուարից, Անդրե Բրետոնից, Լուի Արագոնից, իսկ թրքական շրջանակներում հոսում էր Օրհան Վելիի, Օքթայ Ռիֆաթի, Մելիհ Ջեւդեթի հունով: Հայ գրական միջավայրի վրա ազդեցությունների առումով թուրք գրականությունը, այսպիսով, կարելի է ասել, ակամա միջնորդի դեր էր ստանձնում՝ պայմանավորված միջավայրի հանգամանքով, լեզվական գործոնով, հետաքրքրությունների լայն կորագծով:

Գրական շարժումը ժամանակի ընթացքին կարողացավ բանաստեղծական դպրոցի արժեք ձեռք բերել եւ ունեցավ հետեւորդների բանակ ոչ միայն Պոլսում, այլեւ Սփյուռքի այլ գրական հորիզոններում (Իրմա Աճեմյան, Հիլդա Գալֆայան-Փաճոսյան, Վարդերես Գարակյոզյան, Արմենուհի Թերզյան, Գալուստ Խաճենց, Արսեն Ճանյան, Զարեհ Մելքոնյան, Գրիգոր Պըլտյան եւ ուրիշներ): Նրա արձագանքները հասան նաեւ Հայաստան. այս բանաստեղծության ինչ-ինչ կենսական հատկանիշներ նկատելի են նաեւ հայրենական բանաստեղծների մոտ (Հովհաննես Գրիգորյան, Հենրիկ Էդոյան, Արտեմ Հարությունյան եւ այլն):

*

Հարուստ ու նշանակալից է Զ. Խրախունու բանաստեղծական հունձքը:

Առաջին՝ 1964 թվականին լույս տեսած «Քար կաթիլներ» քերթողագրքին հաջորդել են տասնյակ ժողովածուներ: Ունի նաեւ երկու թատերախաղ՝ «Փոթորիկ» (Իսթանպուլ, 1999) եւ «Դիմակի ետեւ» (Իսթանպուլ, 2000):

Զ. Խրախունու բանաստեղծությունները թարգմանվել են օտար լեզուներով:

Բանաստեղծն ինքը եւս կատարել է թարգմանություններ, որոնք հաճախ ուղեկցվում են հեղինակների կենսագրական տեղեկություններով եւ արժեւորումներով: Հիշատակենք նրանցից մի քանիսին՝ Փոլ Վալերի, Կլոդ Դեբյուսի, էզրա Փաունդ, Ժան Ֆոլեն, Ժագ Պրեվեր, Ֆրանց Կաֆկա եւ այլն:

Զ. Խրախունին զբաղվել է նաեւ գիտախմբագրական աշխատանքով («Թօ», «Նոր սան», «Մարմարա» օրաթերթի «Գրական-գեղարվեստական էջեր»): Զ. Խրախունու խմբագրական աշխատանքի մեջ են մտնում նաեւ նրա

[3] **«Թօ»**, Իսթանպուլ, Ա. տարի, թիւ 2, Յունիս, 1959, էջ 21:
[4] **Սեյրան Զաքարյան**, Փիլիսոփայության պատմություն, Եր., 2007, էջ 300-302:
[5] **Զարեհ Խրախունի**, Դիւցազնահանդէս, Իսթանպուլ, 1984, էջ 203:

[6] **Թորոս Թորանեան**, Իսթանպուլահայերը կը կանչեն, Իսթանպուլ, 1997, էջ 13:

© National Library of Armenia

կազմած՝ Հովհաննես Թումանյանի, Պ. Դուրյանի, Ներսես Շնորհալու, Հովհ. Կոլոտ Պատրիարք Հոր եւ մի շարք եկեղեցական դեմքերի հուշամատյանները:

Նրա կենսագրության մեջ առանձին դերակատարություն ունեն երկու վերլուծական-քննադատական աշխատությունները, որոնք ամփոփվել են «Նշմարներ միւս երեսէն» (Իսթանպուլ, 1991) եւ «Անդրադարձումներ» (Իսթանպուլ, 2004) խորագրերի ներքո:

Ուշագրավ է, որ իր տեսաբանական հոդվածներում եւ գրքերում հեղինակը նախապատվությունը տալիս է «Արթօ Ճիւմպիւշեան» ստորագրությանը՝ Զարեհ Խրախունիին «վստահելով» միայն բանաստեղծելու արվեստը:

*

Երկրորդ՝ «*Արեւմտահայ գրական ավանդույթին հավատարիմ*» ենթագլխում Զ. Խրախունու եւ արեւմտահայ դասական շրջանի հեղինակների ստեղծագործական առնչությունների ճանապարհով փորձել ենք ցույց տալ այն գործոնները, որոնցով պոլսահայ գրականությունը ապահովել է արեւմտահայ նախորդ շրջանի գրականության շարունակականությունը:

Ծրագրային «Մայր գիծը» հոդվածում տեսաբան Ճյումպյուշյանը շտապում էր պատասխանել պոլսահայ նոր երգը հայ գրականության բուն արմատից հեռացնողներին՝ ընդգծելով, որ այն, անկախ իր «նորատարազ» բնույթից, գալիս է Դ. Վարուժանից, Վ. Թեքեյանից, Մ. Զարիֆյանից եւ «ուղղակի կը կազմէ բարեշրջումի շղթային վերջին օղակը»[7]:

Դժվար է ցույց տալ որեւէ արեւմտահայ երգչի, որ ընկած չլինի Դ. Վարուժանի ազդեցության տակ: Ցեղի ոգու գոռ շեփորումներից, գեղեցիկի ու կրքի որոնումներից մինչեւ գյուղական խաղաղ հովվերգություն ընդգրկող նրա ստեղծագործությունը համախմբել է ամենատարբեր բանաստեղծների ու թույլ տվել օգտվել նրա գեղագիտական համակարգից:

Զ. Խրախունու առաջին քերթվածը՝ «Յաղթականը», որը լույս տեսավ Մխիթարյան Սանուց Միության «*Սամ*» ամսաթերթում 1948 թ., վարուժանյան բանաստեղծությամբ ոգեւորության պտուղ էր, ինչը հեղինակը պայմանավորում է նախ եւ առաջ իր տարիքային հանգամանքով. «...դեռ քսաներկու տարեկան էի»[8]:

Զ. Խրախունու համար Դ. Վարուժանը եւ ուսուցիչ է, եւ ստեղծագործական ճանապարհի հավատարիմ ուղեկից, գրչի հավատավոր եղբայրությունը հաստատած արվեստագետ:

Պատահական չպետք է համարել այն հանգամանքը, որ վերը նշված «Յաղթականը» երախայրիքը վերջինս դրել է «Հարցարան» ժողովածուի մեջ, որը հեղինակի յուրատեսակ ինքնախոստովանանքն է, մի տեսակ հաշվեկշիռ, ուստի նա ինքը հարկ է համարել մեկնաբանություններ տալ նաեւ իր արվեստի կազմավորման եւ կրած ազդեցությունների շուրջ:

---

[7] **Արթօ Ճիւմպիւշեան**, Նշմարներ միւս երեսէն, Իսթանպուլ, 1991, էջ 75:
[8] **Զարեհ Խրախունի**, Հարցարան, Իսթանպուլ, 2007, էջ 32:

Բանաստեղծի իր դասերն ու «ուսումնառությունը» Զ. Խրախունին պայմանավորում էր «երկու զուգընթաց աղբիւրներու հոսանքներով. մէկը Դանիէլ Վարուժանի դիւցազներգական սխրանքն էր, միւսը՝ Վահան Թէքէեանի քնարերգութեան խոհուն շունչը»[9]: Իսկապես, Դ. Վարուժանը իր ներգործուն հմայքը էպիկ քերթող Զ. Խրախունու համար չի կորցնում նաեւ տասնամյակներ անց: Հասուն տարիքում էլ վերջինս չի վարանում անվերապահորեն իրենը համարել Վարուժանի գրչից ծավալվող լույսը՝

Որուն խոնարհ այլ մահու չափ սիրահար
Պրիսմակն եմ շողաբեկ[10]:

***

Ինչքան էլ նորարար ու դասական բանաստեղծական ծեւերին տուրք չտալու հետեւողականությունը որդեգրած՝ պոլսահայ արդի բանաստեղծությունը չէր կարող շրջանցել Վ. Թեքեյանին:

Այն, որ ընթերցողը դժվար ճանապարհ էր անցնելու՝ մտնելու համար թեքեյանական աշխարհը, կանխազգում էր նաեւ ինքը՝ հեղինակը: 1922 թվականին գրված «Ընթերցողին» ծոնի մեջ նա գիտակցում էր, որ ինչքան էլ բացվի ուրիշների առջեւ, միեւնույն է, «անցորդ»-«ընթերցողի» համար անհասանելի պիտի մնայ իր «լոյսերովը պայծառ» ու «մթութեամբը ահեղ»:

Ընթերցողին տեսանելի է միայն մակերեսի հանդարտությունը, իսկ ահա խորքերում թաքնվածը հրաբխի ուժգնություն ունի: Բանաստեղծի հոգին հանք է,

Որուն հազիւ հեղեղներ քրքրեցին խաւը վերին,
...Մինչ հըրաբուխ մը խորունկ անոր ներքեւ կը գոռար...[11]:

Պոլսահայ բանաստեղծը ընթերցողի հետ «շփումի» հարցադրումը ավելի առարկայական ճամփով է տանում («Հանք»): Մի պահ կարող է թվալ, թե գործ ունենք հանքի առարկայական հարաբերության հետ, մինչդեռ մեր առջեւ բանաստեղծի անսպառ ներաշխարհն է: Փիլիսոփա-քերթողի «հանքը» դժվար է պեղել, որովհետեւ խորքերին հասնելու ու հարստությունը չափակշռելու որոշ անհնարինություն մնում է, կա նաեւ ընթերցող միջավայրի՝ պատկերներին հաղորդ դառնալու մտավոր զարգացածության խնդիրը.

Այնքան խոր եմ այնքան հարուստ որ երբեք
Ոչ սահմանիս ոչ հաշիւիս կը հասնիք...[12]:

Վ. Թեքեյանի համեմատությամբ Զ. Խրախունին ժլատ է. եթե Վ. Թեքեյանը ափսոսանքի զգացումներով է լցված առատորեն բացվելու համար.

Հոգիս իմս է եւ այսօր կը մըտածեմ թէ հա՞րկ էր
Զայն այս չափով ալ միայն՝ անցորդներուն ճանչցընել,

---

[9] **Նույն տեղում**, էջ 31:
[10] **Նույնը**, Քար Հայաստանի, Պէյրութ, 1997, էջ 51:
[11] **Վահան Թէքէեան**, Սէր, Փարիզ, 1933, էջ 7:
[12] **Զարեհ Խրախունի**, Քար կաթիլներ, Իսթանպուլ, 1964, էջ 6:

© National Library of Armenia

Մինչ կ'ուզէի քիչերուն ամբողջովի՛ն զայն յանձնել...[13]:

Ապա պոլսահայ նոր բանաստեղծության առաջնորդը համբերությամբ սպասում է ընտրյալ ընթերցողին.

Ես կը պահեմ կոյս խաւերն իմ,
Գալիքներուն ծեզմէ վերջ
Ու կը սպասեմ դարեր յետոյ զիս գտնողին խանդավառ
Իմ խորքերուս իջնողներուն երկիւղած[14]:

***

Պոլսահայ նորագույն բանաստեղծության վրա ազդեցությունների առումով արեւմտահայ երրորդ երակը Զ. Խրախունու կարծիքով կապված է Մաթեւոս Զարիֆյանի անվան հետ: Թերեւս վերջինիս «ներկայությունը» առավելապես կարելի է նկատել պոլսահայ նորագույն քնարաշունչ բանաստեղծների վրա:

Կարող ենք բերել մեկ-երկու բնորոշ օրինակ, որոնք վերաբերում են զուտ պատկերային-արտահայտչական նմանությունների (այստեղ նկատի ունենք Մ. Զարիֆյանի «Երկու աւերակ» քերթվածը), արվեստագետի հոգեաշխարհի վերիվայրումներին («Կատար» եւ «Ծայրագրութիւն» Հովհ. Թումանյանի «Վայրէջք»ի հետ զուգադրումով), խորհրդանիշների ընտրությանը (օրինակ՝ ծառը):

Իհարկե, Զարիֆյան-Խրախունի ստեղծագործական առնչությունները չեն հավակնում ժառանգորդական կապի այն ուժգնության, որն ապահովում են Դ. Վարուժանն ու Վ. Թեքեյանը: Այդ առիթով խոստովանանքի պես է հնչում արդեն 2007 թ. Զ. Խրախունու տված «բացատրութեան» մեջ Մ. Զարիֆյանի անվան բացակայությունը: Տարիների ընթացքում զուլալվում են ազդեցության այն հիմնական աղբյուրները, որոնց ակունքներում կանգնած են վերը բերված երկու բանաստեղծները:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԶԱՐԵՀ ԽՐԱԽՈՒՆԻ ԵՎ ԱՐԵՎԵԼԵՀԱՅ ԴԱՍԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԸ

Այս գլուխը նույնպես բաղկացած է երկու ենթագլուխներից՝ «Թումանյան-Խրախունի. «մայր գծի հոլովույթում» եւ «Տերյան-Խրախունի. հայրենիքի ճակատագրի մեկնության պատուհաններ»:

Իր բերած գրական շարժման աղբյուրը համաշխարհային հարթություններում տեսնելուց զատ՝ Խրախունին այն կապում էր նաեւ արեւելահայ բանաստեղծներից եկող ավանդների հետ՝ «Բացառուած չեն նաեւ արեւելահայերը՝ Յովհաննէս Թումանեան, Աւետիք Իսահակեան,

[13] **Վահան Թէքէեան**, Սէր, էջ 5:
[14] **Զարեհ Խրախունի**, Քար կաթիլներ, էջ 6:

Վահան Տէրեան եւ մանաւանդ Եղիշէ Չարենց՝ իր էպիքական քերթողութեամբ եւ արդիապաշտ ձգտումներով, որոնք կ'առաջնորդէին բանաստեղծութիւնը դէպի 20-րդ դարու բաբախուն կեանքը եւ հրատապ իրողութիւնները»[15]: Մեր կարծիքով, այս երկրորդ խմբում ամենից «թույլը» Ավ. Իսահակյանի ներկայությունն է:

Հովհաննես Թումանյան - Զարեհ Խրախունի բանաստեղծական երկխոսությունը հաստատվում է մի քանի ուղղություններով՝ սկսած պոլսահայ բանաստեղծի՝ Թումանյանի զուտ ստեղծագործական աշխարհի հանդեպ ցուցաբերած հետաքրքրությունից, մարդկային կեցության որոնումներից, ազգային հարցադրումներին ընդհանրական մոտեցումներից մինչեւ փիլիսոփայական հածումներ եւ տեսաբանական էպիկական որոնումներ:

Այսպես, դեռեւս 1969-ին Պոլսո Պատրիարքարանը Զ. Խրախունու խմբագրությամբ եւ մեկնություններով լույս ընծայեց Թումանյանի «Յուշամատեան»ը: Նույն տարիներին բանաստեղծի վերածումներով արեւմտահայերենով հրապարակ իջան Լոռեցու հեքիաթները: Առիթն ավելի քան բարեբեր էր՝ Հովհ. Թումանյանի 100-ամյակն էր:

Ընդհանրապես, Մեծ Լոռեցու ստեղծագործական աշխարհը ստամբուլահայ քերթողի նախասիրությունների ոլորտում կայուն դերակատարություն ունի:

2008-ին Հալեպի «Կիլիկիա» հրատարակչատունը տպագրեց «Յովհաննէս Թումանեան. 12 հէքեաթներ» շքեղ հավաքածուն, որում տեղ գտած ստեղծագործությունների գրեթե կեսը Զ. Խրախունին վերածել է վերջին երկու-երեք տարիներին («Շունն ու կատուն», «Անխելք մարդը», «Տէրն ու ծառան», «Չուարճացողին զուարճութիւն չի պակսիր, աշխատողին՝ աշխատանք», «Աղաւնիներու վանքը», «Խօսող ձուկը»):

Թումանյան-Խրախունի գրական առնչությունները ուղղակի ազդեցությունների շրջանակով չեն սահմանափակվում. շատ դեպքերում առաջինի առաջադրած այս կամ այն գաղափարը պոլսահայ քերթողի համար նոր մտքերի աղբյուր է դառնում՝ ապահովելով բանաստեղծների տարբեր սերունդների երկխոսությունը: Բնորոշ օրինակներ են «Հին օրհնություն» - «Օրհաս», «Հառաչանք» - «Բաց աչք», «Հոգեհանգիստ» - «Հոգեհանգիստ» երկերի զուգադիր քննությունները:

*

Հայրենասիրական նյութին անդրադառնալիս հայ բանաստեղծները հաճախ են դիմել սրբազան լեռան՝ Արարատի «մշտահմա» օգնությանը: Դրա շնորհիվ այն դարձել է հայ բանաստեղծությանն ուղեկից ազգային կայուն խորհրդանիշ: Միաժամանակ Արարատի խորհուրդը եղել է գայթակղության առնվաճ քար շատերի համար: Այս մտայնությունը, սակայն, նեղացնում է արվեստի ընկալչության սահմանները. հազիվ կարելի է օտարներին տպավորել «սրտխոսիկ» պատկերներով:

[15] **Զարեհ Խրախունի**, Հարցարան, էջ 31:

© National Library of Armenia

Միաժամանակ պետք է ընդգծել, որ լավագույն բանաստեղծները՝ Հովհ. Թումանյան, Ե. Չարենց, Սիլվա Կապուտիկյան, Հովհ. Շիրազ եւ ուրիշներ, քերթողական վարպետության շնորհիվ կարողացել են տալ բանաստեղծական արժեքավոր նմուշներ՝ կարծես այլեւս բացառելով մրցակցության որեւէ հնարավորություն:

Թվում է՝ Հովհ. Թումանյանից հետո այլեւս անհնար է նոր խոսք ասել: Սակայն Զ. Խրախունու՝ ազգային նյութի հանդեպ չափավոր մոտեցման պահանջն ու «նուիրականացած ազգային, կրօնական եւ պատմական ըմբռնումների ու խորհրդանշանների»[16] հանդեպ ունեցած մեծ պատասխանատվությունը գալիս են ապացուցելու, որ նա չի նախընտրում «ընթանալ լավ սալարկված միեւնույն լայն փողոցով»[17]. նա լեռներգության մեջ բարձունք նվաճած բանաստեղծն է:

Արեւելահայ բանաստեղծից Զ. Խրախունուն փոխանցվում է ստեղծագործելու էպիկ եղանակը՝ «նույնիսկ ամենալարված ու ողբերգական իրադրության մասին պատմել արտաքնապես հանգիստ, առանց զգացմունքի եւ վերաբերմունքի ճչացող շեշտերի, թողնելով, որ այդ վերաբերմունքն արտահայտվի դեպքերի օբյեկտիվ ընթացքի մեջ»[18]:

Երկու հեղինակների մոտ էլ լեռները պատմության ու ժողովրդի բնավորության հատկանիշների խտացումն են, մեր ընդհանրական տառապանքի ու ցավի վկայությունը: Միեւնույն ժամանակ երկու ստեղծագործությունների մեջ էլ ընդգծվում են վերելքի տրամադրությունները, լեռներն իրենցով պայմանավորում են ապագայի լուսավոր տեսլականը՝ բարձունքը նվաճելու ձգտումը՝ մի դեպքում «պայծառ առավոտ»ի[19] («Հայոց լեռներում») խորհրդով, երկրորդ պարագային՝ «անմահութեան սանդուխ»ին[20] («Լեռն ի վեր») հասու լինելու «երկիւղած» քայլերով:

*

Թումանյան-Խրախունի գրական աղերսները մեզ համար նյութի ընտրության, պատկերների կառուցման ընդհանուր գծերից զատ բացվում են նաեւ գեղագիտական ըմբռնումների, բանաստեղծ-ընթերցող, բանաստեղծ-ընկերություն (Խրախունու ձեւակերպումով՝ «ես եւ ուրիշներ») հարաբերությունների սահմանման ճանապարհով: Այս կապերը երեւում են նրանց թե տեսաբանական որոնումների մեջ, թե քերթվածներում:

Այսպիսով, Զ. Խրախունու ստեղծագործական ներքին շերտերի քննությունը մեզ բերում է այն համոզման, որ, որքան էլ եվրոպական բանաստեղծության ճանապարհը գայթակղեր նրան իմացական միջուկով, տարիների ընթացքին նա չի լքել ազգային երգի «մայր գիծը»՝ այս

[16] **Արթօ Ճիւմպիւշեան**, Անդրադարձումներ, Իսթանպուլ, 2004, էջ 184:
[17] **Ստեփան Թոփչյան**, Անհունի անդրադարձը, Եր., «Սովետական գրող», 1987, էջ 288:
[18] **Էդուարդ Զրբաշյան**, Թումանյանի պոեմները, Եր., 1985, էջ 110:
[19] **Հովհաննես Թումանյան**, ԵԼԺ, հ. 1, Եր., ԳԱ հրատ., 1988, էջ 207:
[20] **Զարեհ Խրախունի**, Քար կաթիլներ, էջ 19:

պարագային շարունակելով այնտեղից, որտեղից «խորհուրդ է տվել» իր մեծ «նախորդը»՝ Հովհ. Թումանյանը:

***

Զ. Խրախունու՝ Վ. Տերյանից ազդեցություններ կրելու հանգամանքը մենք այնքան էլ հակված չենք ուղղակի իմաստով հասկանալու: Միգուցե այդ ազդեցությունը կարելի է հանգեցնել զուտ որպես Խրախունի ընթերցողի եւ Տերյան բանաստեղծի հարաբերության, որտեղ ընթերցող-բանաստեղծ կապը երեւան է գալիս իբրեւ գրական ճաշակի ձեւավորման մաս: Չմոռանանք, որ Վ. Տերյանը սիմվոլիստ բանաստեղծ է, նեոռոմանտիկ, այսինքն՝ բացում է տրամադրության, հույզերի աշխարհ, իսկ Զ. Խրախունին՝ էպիկ, այն է՝ մերժում է հուզականությունը: Այնուամենայնիվ նրանց միջեւ կան ընդհանրական որոշ գծեր:

Գրական առնչությունները հաճախ պետք է հասկանալ ոչ միայն նմանությունների, համադրությունների իմաստով, այլեւ հակադրությունների եւ բանավեճերի ճանապարհով: Հակադրություններ, որոնք կարող են հանդես գալ նաեւ նույն բանաստեղծի ստեղծագործական աշխարհում: Այդպիսին է Զ. Խրախունու՝ 1964 թ. հրատարակած «Քար կաթիլներ» անդրանիկ ժողովածուն, որի խորագիրն արդեն հուշում է էպիկականության եւ հուզականության համադրումը: Եվ իրոք, այստեղ հայտնվել էին բանաստեղծություններ, որոնք հուզական լիցքեր էին պարունակում:

Հուզականության հատկանշանական նմանություններ ենք հանդիպում Վ. Տերյանի "Fatum" (առաջին՝ «Մթնշաղի անուրջներ» քերթողագրքից) եւ պոլսահայ բանաստեղծի «Սիրերգ» քերթվածներում (վերը նշված ժողովածուի «Կաթիլներ» ենթաբաժնից): Վերջինը, կարծում ենք, տերյանական տրամադրությունների արձագանք է:

Ընդգծենք, որ նման քերթվածները Զ. Խրախունու ստեղծագործական համակարգում մեծ քանակ չեն կազմում եւ չեն վերաճում ստեղծագործական հատկանիշի. «...նիւթի այդօրինակ գործածութեան յաճախակի փորձը կարող էր նրան, իր համար էլ աննկատ, հրել դէպի քնարերգակների ճամբար»[21],- իրավացորեն գտնում է Ս. Դանիելյանը:

Վ. Տերյան - Զ. Խրախունի պատկերային մտածողության «հանդիպումը» միակը չէ: Նրանց կարելի է տեսնել նաեւ ազգայինի ճանաչողական կամրջի վրա: Խոսքն այստեղ վերաբերում է Վ. Տերյանի «Մի՞թե վերջին պոետն եմ ես...», «Երկիր Նաիրի, երազ հեռավոր...» սկսվածքով բանաստեղծությունների եւ Զ. Խրախունու «Նախերգ» քերթվածի զուգադիր քննությանը:

Այն, որ Զ. Խրախունուն հետաքրքրել է Վ. Տերյանի աշխարհը, ապացուցում է նաեւ այն հանգամանքը, որ նրան անդրադարձել է «Ստուեր եւ արձագանգ» պոեմում, որտեղ բանաստեղծը պարզում է Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրին նախորդած գիշերվա խորհրդածությունների ամբողջ մղձավանջը. դեմ-դիմաց նստած են հայկական

[21] **Սուրէն Դանիէլեան**, Բանաստեղծութեան ազատագրումը. Զարեհ Խրախունի, Ս. էջմիածին, 1999, էջ 45:

© National Library of Armenia

գործերի խորհրդական Վ. Տերյանը, արտաքին գործերի ժողկոմի տեղակալ Կարախանը (Լեւոն Կարախանյան, 1918-1921) եւ Սովետական Միության արտաքին գործերի կոմիսար Չիչերինը: Դառն հեգնանքով են հնչում ռուս պատվիրակի խոսքերը՝ որպես գնահատական ուղղված տերյանական ռոմանտիկ եւ դեռ երազայնություն պահպանող մտայնության.

Հա՛ ի՞նչ կ'ըսէք – կրնա՞յ ըլլալ որ այս ահեղ մղձաւանջէն
մեղրաժպիտ բան մը ծնի.
Ի՞նչ կը սպասէք սա սառնաշունչ գիշերէն
գարնան արե՞ւ, անոյշ հովի՞կ, ծառ ծաղի՞կ...[22]:

Նկատենք, որ Զ.Խրախունին, անդրադառնալով Վ. Տերյանին, ոչ միայն փորձել է ցույց տալ պատմության հերթական դրվագ, որտեղ սայթաքել է մեր դիվանագիտությունը, այլեւ նպատակ է հետապնդել գնահատականներ ուղղել բանաստեղծ Տերյանի բարոյական նկարագրին, ինչու չէ ֆիզիկական հիվանդկախ, ընկճված վիճակներին, նրա մեջ բախվող արվեստագետին, մարդուն ու քաղաքական գործչին:

Վ. Տերյանի կերպարի գեղարվեստական լավագույն մշակումներից է սա մեր գրականության մեջ, ուր բանաստեղծը կառուցում է հեղինակային «միջնորդությունները» ցավի, անհաշտության ու կարեկցության ոսպնյակներով:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
Զ. ԽՐԱԽՈՒՆԻՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆՆԵՐՈՒՄ

Այս ենթագլուխը իր հերթին բաժանված է երեք ենթաբաժինների:

Առաջին՝ «*Չարենց-Խրախունի. էպիկական «լուսաբացի» սահմաններում*» ենթագլխում փորձել ենք ցույց տալ, որ պոլսահայ բանաստեղծ Զ. Խրախունու ստեղծագործական համակարգում Ե. Չարենցի «ներկայությունը» գալիս է ոչ թե ծեւական-արտահայտչական նմանություններից, այլ պատմության իմաստավորման, գեղարվեստական առաջադրությունների ընդհանրությունների ճանապարհով: Եվ բոլորովին էլ պարտադիր չէ, որ այդ «ընդհանուր առաջադրությունները» հանգեցնեն նաեւ ընդհանուր մոտեցումների: Նույն երեւույթը երկու տարբեր արվեստագետներ կարող են տարբեր կերպ մեկնել: Եվ այս առումով նույնպես կարելի է շահեկան համադրական աշխատանք կատարել:

Զարեհ Խրախունի-Եղիշե Չարենց հանդիպման առաջին «կայանը» պատմությունն է: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ երկու բանաստեղծները հայոց պատմության դրվագներին անդրադառնալիս դիմում են բանաստեղծական համեմատաբար ծավալուն ժանրին՝ պոեմին: «Սասունցի Դավիթ», «Պատմության քառուղիներով», «Զրահապատ Վարդան Զորա-

[22] **Զարեհ Խրախունի**, Ստուեր եւ արծագանգ, Մոնթրէալ, 1988, էջ 53:

վար». սրանք են այն երկերը, որոնցում կենտրոնացած են չարենցյան գնահատությունները:

Ե. Չարենցն այնքան էր կապված իր ապրած ժամանակաշրջանին, որ դարի ըմբռնումը նրա ստեղծագործական համակարգում վերածել է առանձին հատկանիշի, ինչը ժամանակին նկատել է էդ. Զրբաշյանը[23]: Բանաստեղծն այնքան ուժգին էր զգում դարի հեւքը, որ ներքնապես ապրում էր ճիշտ այն հակասականությունը, որ գոյություն ուներ ժամանակի մեջ[24]:

Զ. Խրախունու ստեղծագործական համակարգում նույնպես պատմությանը տրվող գնահատությունները առանձին հատկանիշի են վերածել: Այս նյութին վերաբերող խոհերն ու դիտարկումները տեղ են գտել «Ստուեր եւ արծագանգ» եւ «Դարապատում» պոեմներում, որոնցից վերջինում բանաստեղծը փորձել է իմաստավորել այն փոթորկալի շրջանը, որ «20-րդ դար» ենք կոչում, «...որ բանաստեղծի ափի մէջ իմացական կշռաքար է: ...Արուեստագէտի խնդիրը անցեալը ճանաչելն է, նրան պատմութեան խմբագրման փորձերից զերծ պահելը»[25]:

Իսկ այդ պատմության ուրվագծողն ու «խորհրդատուները» նաեւ արվեստագետներն են, այդ թվում՝ Ե. Չարենցը:

*

Հայաստանյան այցելությունները Խրախունի բանաստեղծին ստեղծագործական նոր լիցքեր են հաղորդել: Դրանցից մեկի արդյունք է 1978 թ. գրված «Կամար» բանաստեղծությունը, որտեղ նա հայտնի Չարենցյան կամարի առջեւ ներքին երկխոսության է բռնվում արեւելահայ երգչի հետ:

Եղիշե Չարենց - Զարեհ Խրախունի երկխոսության հրաշալի օրինակ են նրանց «Մայրամուտ» նույն խորագրով բանաստեղծությունները:

Երկուսի պարագային էլ կարմիր գիծը մայրամուտ-մահ փիլիսոփայական զուգահեռն է. մի դեպքում իբրեւ վերահաս մահվան գիտակցություն, մյուս դեպքում բնության հրաշքի առջեւ խնկարկում:

Էպիկական հզոր շունչ, պատմության ու ժամանակի առջեւ պատասխանատվություն, խոսքի ուղիղ սլացք. սրանք են այն ընդհանրական գծերը, որոնք կողք կողքի են բերում 20-րդ դարի երկու երգիչներին:

***

Երկրորդ՝ «*Պ. Սեւակ–Խրախունի. ազգային երգի ոչ «ոչ բանաստեղծական» որոնումների աղերսներ*» ենթագլխում մեր գործնական նպատակն է հնարավորինս ի մի բերել Զ. Խրախունու եւ հայրենի բանաստեղծ Պ. Սեւակի տեսաբանական-ստեղծագործական ընդհանրությունները: Ավելորդ չէ ընդգծել մի հանգամանք. երկու բանաստեղծները

[23] **Էդուարդ Զրբաշյան**, Չորս գագաթ, Եր., «Սովետական գրող», 1982 (տե՛ս «Դարի բանաստեղծը» ենթագլուխը):

[24] **Եղիշե Չարենց**, հ. 4, Եր., ԳԱ հրատ., 1968, էջ 40:

[25] **Զարեհ Խրախունի**, Դարապատում, Եր., 2001, էջ 7 (տե՛ս՝ Ս. Դանիելյանի առաջաբանը):

© National Library of Armenia

շփման անմիջականություն, միմյանց ճանաչողություն չեն ունեցել. Զ. Խրախունին լավ ծանոթ էր Պ. Սեւակի բանաստեղծական աշխարհին, ինչը չի կարելի ասել խորհրդահայ բանաստեղծի մասին: Այս փաստը գալիս է վկայելու, որ երկու բանաստեղծների միջեւ օրինաչափությունները գրականության զարգացման ընդհանուր տրամաբանության մեջ պիտի դիտել եւ ոչ ենթակայական ազդեցությունների խնդիր:

Գրական «ազգակցության» բացառիկ օրինակներ են «առարկայական խորհրդանշապաշտության» եւ «անբանաստեղծական բանաստեղծության» շարժումների ներքին շերտերի ճանաչողության փորձերը, որոնց մասին առաջին անգամ մեզանում խոսել է Ս. Դանիելյանը[26]:

Այստեղից՝ առաջին հետեւությունը. Սեւակ-Խրախունի «հանդիպման» հանգուցային տեղամասը տեսաբանական հարթությունն է: Անտեսելու չեն այդ ընդհանրությունների մեջ երկու արվեստագետների գրական հայացքի, ճաշակի ու բանաստեղծական ոճային մտածողության ձեւավորման «մտերիմ» ճանապարհները, որոնք միասնական են դարձնում հայ բանաստեղծական զարգացումը անցյալ դարակեսին:

*

Սեւակ - Խրախունի ընդհանրական հարցադրումների նոր հանգրվանը զուտ բանաստեղծական պատկերային կալվածն է: Այստեղ արեւմտահայ բանաստեղծը երկխոսության է գալիս Պ. Սեւակի հետ՝ բանաստեղծության, նրա որեւէ տողի, հեղինակային այս կամ այն կենսական դրույթի ուշագրավ հաստատումներով, գիտակից կամ ենթաշերտային վիճարկումներով («Քիչ ենք, բայց հայ ենք» - «Հազարին մէկ», «Ինքնաճանաչ», «Ինքնադատ»): Պ. Սեւակ-Խրախունի երկխոսության հրաշալի օրինակ են պարզում «Եվ այր մի Մաշտոց անուն» պոեմի, «Դիմանկարի ամբողջացման համար» եւ «Թրի դեմ՝ գրիչ» հոդվածները եւ «Մեսրոպատօն» պոեմը:

Առանձին ուշադրության է արժանի «Հայեացք վերէն» քերթվածը, որը արեւմտահայ բանաստեղծը նվիրել է Պ. Սեւակի հիշատակին: Պ. Սեւակի մահվան հանգամանքը Զ. Խրախունուն մղում է ոչ միայն բանաստեղծի ստեղծագործական աշխարհի ու խաղացած դերի գնահատության, այլեւ առհասարակ կյանքի ու մահվան փոխհարաբերության շուրջ փիլիսոփայական հածումների[27]:

***

Երրորդ՝ «Զարեհ Խրախունի եւ 70-ականների գրական սերնդի հարցադրումները» ենթագլխում ելակետային ենք դիտել Զ. Խրախունու «Համառօտ ակնարկ յետպատերազմյան շրջանի իսթանպուլահայ գրականութեան վրայ» հոդվածի դրույթներից մեկը՝ կապված պոլսահայ գրա-

[26] **«Արեւագալ»** / «Հայ դպրութիւն» հասարակական կազմակերպութեան պաշտօնահանդէս, Բ., Եր., 2004, էջ 99-107 (տե՛ս՝ «Քսաներորդ դարի «անբանաստեղծական» զարգացումները» հոդվածը):

[27] **Զարեհ Խրախունի**, Մեսրոպատօն, Իսթանպուլ, 2005, էջ 126:

կանության ազդեցությունների հետ. «Աւելորդ կը նկատեմ խօսիլ Իրանահայ «նորէջական» բանաստեղծներու եւ արձակագիրներու մօտ, մեր արդիական գրականութեան վայելած համակրանքին, ինչպէս նաեւ՝ հայաստանի շատ մը «երիտասարդ» բանաստեղծներու, գրողներու եւ քննադատներու մօտ արթնցուցած շահագրգռութեան եւ հետեւողականութեան մասին»[28]: Հետեւելով բանաստեղծ-տեսաբանի խորհրդին, թե «ուսումնասիրող գրադատներու գործն է երեւան հանել փոխազդեցութիւնները ու հանգիտութիւնները»՝ մենք փորձել ենք ցույց տալ նաեւ այդ աղերսները:

Իրանահայ գրականության մեջ նորագույն միտումները ի հայտ եկան հատկապես «Նոր էջ» ամսագրի շուրջը համախմբված բանաստեղծների ստեղծագործություններում (Գալուստ Խանենց, Զորայր Միրզայան, Արմեն Գես, Արշավիր Մկրտիչ եւ ուրիշներ):

Բերենք նաեւ այն ընդհանրությունները, որոնք կան պոլսահայ նորագույն բանաստեղծության եւ իրանահայ նորարար գրողների միջեւ:

ա) Հրաժարում բանաստեղծական ազգային նեղ որոնումներից եւ համամարդկային որակների արվեստի ընդգրկում, թեկուզ հանդիսավորության, տողանցքի ճանապարհով:

բ) Արվեստագետի ու առհասարակ մարդու ներքին հայացքի ազատության ձգտում: Ինչպես գիտենք, Զ. Խրախունու համար կարեւոր բանաստեղծական հանձնառություն է ազատության բերգսոնյան փիլիսոփայության մեկնությունը, որը հատկապես սրված հասկացություն է «Ազատերգություն» ժողովածուի մեջ:

Մարդու ազատության համար պայքարող արվեստագետ է նաեւ Գալուստ Խանենցը, որը ազատության ճանապարհների վրա առաջամարտիկի դեր է վերապահում իրեն[29]:

գ) Արվեստագետի եւ շրջապատող իրականության հակադրությունը: Պոլսահայ գրականության մեջ այս յուրատեսակ բեւեռացումը լավագույնս ձեւակերպել են Զահրատը եւ Զարեհ Խրախունին, արեւելահայ իրականության մեջ՝ Պ. Սեւակն ու Գ. Խանենցը:

դ) Թեհրանի «Նոր էջ» ամսագիրը արձագանքում էր նաեւ համաշխարհային նորագույն գրական տեղաշարժերին: Պատահական չպետք է համարել այն հանգամանքը, որ նրա էջերում լույս էին տեսնում ծրագրային, իմաստներով համահունչ թարգմանություններ ֆրանսիական բանաստեղծներից (Պոլ Էլյուար, Ժակ Պրեվեր): Հիշենք, որ արեւմտահայ նորագույն գրականությունը ֆրանսիական բանաստեղծական կալվածում առանձնակի ուշադրություն էր բեւեռում հենց վերը նշված հեղինակներին: Զ. Խրախունին նույնպես թարգմանություններ է կատարել նրանցից, հատկապես՝ Ժ. Պրեվերից[30]: Հիշենք «Քարիւղ» բանաստեղծությունը՝ նվիրված այս բանաստեղծին[31]:

[28] **Արթօ Ճիւմպիւշեան**, Անդրադարձումներ, էջ 187:

[29] **Գալուստ Խանենց**, Բարեւ քեզ, մա՛րդ, Պէյրութ, 1974, էջ 62:

[30] **Արթօ Ճիւմպիւշեան**, Նշմարներ միւս երեսէն, էջ 370-377:

[31] Տե՛ս՝ **Զարեհ Խրախունի**, Քար կաթիլներ, էջ 10:

© National Library of Armenia

ե) Հանդեսում լույս էին տեսնում նոր բանաստեղծական որոնումների շուրջ տեսաբանական ուշագրավ հոդվածներ: Հատկապես ուշադրության է արժանի Վարդգես Ֆրանգյանի «Գեղարւեստը եւ արդի գիտութիւնը» հոդվածը, որտեղ նա անհրաժեշտ մեկնություններ էր տալիս ժամանակակից արվեստի եւ բնական գիտությունների փոխհարաբերությունների շուրջ՝ առանձին դեպքերում հենվելով նաեւ Անրի Բերգսոնի ինտուիտիվիզմի վրա[32]: Իսկ Զ. Խրախունին Անրի Բերգսոնի փիլիսոփայական հայացքները լավագույնս ոչ միայն փոխադրել է գեղարվեստական տարածքներ, այլեւ անդրադարձել է ֆրանսիացի փիլիսոփայի տեսաբանական որոնումներին (տե՛ս «Պերկսոն եւ արուեստ», «Էջեր Պերկսոնէն», «Գթութեան մասին»[33]):

Այսպիսով, ամփոփելով պոլսահայ նորագույն գրականության եւ պարսկահայ բանաստեղծության ընդհանրությունների մասին մեր դիտարկումները, արձանագրում ենք, որ իրանահայ նորարար բանաստեղծական սերնդի գրականությունը խորքի մեջ պոլսահայ նորագույն բանաստեղծական իմաստների դյուրընկալ իրագործումն է արեւելահայ շրջանակներում:

***

Զ. Խրախունի-արեւելահայ 70-ականների հայաստանյան սերունդ հարաբերակցության մեջ կարելի է նկատել բովանդակային-գեղագիտական ընդհանրություններ, որոնք կողք կողքի են բերում բանաստեղծական այս որակները: Խոսքը վերաբերում է ոչ թե տողացի նույնականությանը, այլ մոտեցումների համանմանությանը: «...Կարիք չկայ ճիգեր գործելու եւ Սեւակից ու Ա. Հարությունյանից տողեր ջոկելով, բառիմաստային մակերեսի, որոշ պատկերների նմանություններ գտնելով, Ա. Հարությունյանին շուտափույթ դարձնենք Սեւակի ժառանգորդը: Այսպես արհեստականորեն, ձգել-իրար բերելով կարելի է աշխարհի բոլոր բանաստեղծներին միմյանց մոտեցնել եւ աչքաթող անել **ժառանգորդության ներքին, միանգամից չբացահայտուող մեխանիզմը** (ընգծումն իմն է - Ք.Ա.)...» [34], ինչի հետ մենք համաձայն ենք:

Անդրադառնալով Զ. Խրախունի-արեւելահայ 60-70-ականների գրական սերունդ (այդ թվում կարելի է ներառել նաեւ իրանահայ նորէջականներին) զուգահեռներին, նշենք, որ դրանք վերաբերում են համաշխարհային գրական տեղաշարժերը տեղական գրականության մեջ ներմուծելու ավանդույթին, քերթողական արվեստին տեսաբանական համանման մոտեցումներին, բանաստեղծության մեջ իմացականության տարրի նախապատվությանը, ժամանակաշրջանի նոր զգացողությանն ու հատկապես ընթերցողի նկատմամբ գրողական պատասխանատվությանը:

[32] **«Նոր էջ»**, գիրք գրականութեան, թիւ 15, տպ. «Մոդերն», Թեհրան, 1967, էջ 167-168:

[33] Տե՛ս՝ **Զարեհ Խրախունի**, Նշմարներ միւս երեսէն, էջ 299-305:

[34] **Ալեքսանդր Թոփչյան**, Ապագայի ներկայությամբ, Եր., «Սովետական գրող», 1987, էջ 18-19:

***

Այսպիսով, ընդհանրացնելով Զարեհ Խրախունու ստեղծագործական աշխարհի մասին մեր պատկերացումները՝ արձանագրենք, որ նա հայ բանաստեղծությունը էպիկական նոր հանգրվանի հասցրեց: Այդ ճանապարհի սկզբում այն տարակուսանքը, թե «շատ դժուար էր արժէքաւոր գործ մը ստեղծել՝ տակաւին թարմ յիշատակներ ունեցող տիտան գրողներու շուքին տակ»[35], այլեւս հեղինակի համար հեռավոր մտահոգություն է: Նա անցել է իր ճանապարհը:

Կապված լինելով բանաստեղծական ավանդույթներին՝ Զ. Խրախունին ավելի հեռուն գնաց. կարողացավ ստեղծել բանաստեղծական դպրոց: Դիպուկ է նկատել Պ. Սեւակը. «Բոլորիս չէ, որ տրված է գրական դպրոց բաց անելու, գրական հոսանք առաջ բերելու բախտը: Ոչ ոք չի կարող իմանալ, թե այդ բախտը՝ հեքիաթական սինամ հավքի պես ո՞ւմ ուսին կթառի: Բայց ամեն մի իսկական բանաստեղծ (արեւմտահայը կասեր՝ վավերական բանաստեղծ) պատկանելով գրական այս կամ այն դպրոցին, պիտի լինի ինքնագլուխ (այս բառի նախնական իմաստով, այսինքն՝ ունենա սեփական գլուխ) եւ ինքնատիպ»[36]: Զ. Խրախունին դարձավ նոր առարկայական շարժման առաջնորդը՝ իրագործելով երիտասարդական շրջանի իր իսկ պատգամ-հորդորը. «Չի բաւեր անցք մը բանալ ու յառաջանալ. երբեմն պէտք է կանգ առնել, տեսնել մեկնակէտը, նշան դնել ու գամել ցուցատախտակ մը, որ ետեւէն եկողներուն ըսէ լեռելեայն. «Այս ալ ճամբայ մըն է, ասկէ ալ կրնաք անցնիլ...»[37]:

Բնութագրական է Սամվել Մուրադյանի գնահատական ամփոփիչ խոսքը. «...հայրենի եւ համաշխարհային բանաստեղծական համանվագի մեջ նա ծանր տքնանքով որոնել ու գտել է իր սեփական ձայնը հնչեցնելու կերպը եւ ոչ թե հակադրվել է ավանդական բանաստեղծներին ու քերթողությանը, այլ հայտնաբերել իրերն ու երեւույթները, մարդկային ու հանրային հարաբերությունները բանաստեղծականացնելու նախորդներից տարբեր եղանակ...»[38]:

Այս մեկնակետը գեղարվեստական ժառանգության ճանաչողության հարուստ շերտ է՝ արժանի գնահատության, խոր արժեւորման:

[35] **«Մարմարա»** / հասարակական-քաղաքական օրաթերթ, 27 Յուլիս, Ուրբաթ, 2012, էջ 3:

[36] **Պարույր Սեւակ**, հ. 5 / գրականագիտություն, քննադատություն, Եր., 1974, էջ 199:

[37] **Արթօ Ճիւմպիւշեան**, Նշմարներ միւս երեսէն, էջ 77:

[38] **Սամվել Մուրադյան**, Գրական հանգրվաններ, Գիրք Գ., Եր., ԵՊՀ հրատ., 2010, էջ 361:

© National Library of Armenia

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Զարեհ Խրախունին եւ արեւելահայ բանաստեղծությունը» թեկնածուական ատենախոսությունը գրելու ընթացքում հանգել ենք հետեւյալ եզրակացություններին.

1.Պոլսահայ նորագույն բանաստեղծությունը, որ հրապարակ իջավ երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո, իր բնագծերով առանձնանում էր հայ գրականության պատմության ավանդական ուղուց եւ առաջին հայացքից կարծես հեռացած էր նախորդած արեւմտահայ, առավել եւս՝ արեւելահայ գրականության ընթացքներից: Եվրոպական նորագույն գրական հոսանքներից որոշ սնուցում ստացած այս արվեստը, չնայած բանաստեղծական ձեւի նորարարության, պարզ, անպաճույճ պատկերներով տպավորելու միտումի, արտառոց թվացող, «անբանաստեղծական» առարկաների նախապատվության, խորքի մեջ մաս էր կազմում հայ գրականության պատմության, ավելին՝ հանդես էր գալիս իբրեւ արեւմտահայ շքեղ գրականության անմիջական ժառանգորդ:

2.Կարպիս Ճանճիկյանով եւ Հայկազուն Գալուստյանով սկիզբ առած նորագույն այս բանաստեղծությունը Զահրատի եւ Զարեհ Խրախունու նման արվեստագետների շնորհիվ Վոսփորի ափերին վերաճեց գրական շարժման: Իսկ այդ շարժմանը իր ստեղծագործությամբ ու տեսաբանական հզոր զինանոցով համակարգային բնույթ հաղորդեց Զ. Խրախունին:

3.Պոլսահայ գրականության սահմանման ճանապարհին նա իր «Մայր գիծը» (1959) հոդվածում եկավ եզրակացության, որ այն առաջին հերթին կապվում էր արեւմտահայ հեղինակներից՝ Դանիել Վարուժանից, Վահան Թեքեյանից եւ Մաթեւոս Զարիֆյանից եկող ազդակների հետ: Զ. Խրախունու ստեղծագործությունը այդ ժառանգորդության լավագույն ապացույցն է: Նրա շնորհիվ նաեւ ետպատերազմյան շրջանում Պոլսին վերադարձվեց արեւմտահայ շքեղ գրականության առաջնորդ դերակատարությունը:

4.Գրական նորագույն շարժումը առանձնացավ Սփյուռքի ամբողջ տարածքի վրա եւ դուրս գալով զուտ տեղային նշանակությունից՝ իր ազդեցությունը տարածեց նաեւ Պոլսից դուրս՝ Մերձավոր Արեւելքում եւ Ամերիկայի Միացյալ Նահանգներում (Զարեհ Մելքոնյան), Ֆրանսիայում (Հիլդա Գալֆայան-Փանոսյան, որոշ չափով Գրիգոր Պըլտյան), Իրանում (Գալուստ Խանենց, Զորայր Միրզայան), զգալի էպիկական երակով նաեւ՝ Հայաստանում (Հովհաննես Գրիգորյան, Արտեմ Հարությունյան, Հենրիկ Էդոյան):

5.Ամենից էական հատկանիշը, որ առանձնացնում է Զ. Խրախունուն հայ բանաստեղծության պատմության համաբնագրում, փիլիսոփայական երակն է: Ֆրանսիացի իմաստասեր Անրի Բերգսոնի աշխարհաճանաչողության ինտուիտիվ մեթոդը, կամքի եւ ազատության գաղափարները նա կարողացավ լավագույնս տեղափոխել գեղարվեստական ոլորտ:

6.Կամքի եւ ազատության փիլիսոփայական ըմբռնումը Զ. Խրախունին յուրացրեց երկու ճանապարհով. մեկը սահմանելով իբրեւ արվեստագետի կամային գործողություններ, որոնք հանդես էին գալիս

առարկաների ու խորհրդանիշների ազատ ընտրության ու բազմակի կիրառության ճանապարհով, այսինքն՝ իբրեւ «առարկայական խորհրդանշապաշտություն», մյուսը իբրեւ հայրենիքի ու ժողովրդի ազատության շեփորում՝ իբրեւ գալիքի կանխազգացողություն: Ի դեպ, այս առումով Զ. Խրախունին այն երջանիկներից էր, որ ի տարբերություն իր մեծ նախորդի՝ Հովհ. Թումանյանի, ոչ միայն երգեց ու մոտեցրեց անկախության երազը՝ «հանուր կյանքի արշալույսը», այլեւ եղավ նրա պայքարի ականատեսը, ջղուտ մասնակիցը, որովհետեւ 1990-ականներին այդ արշալույսի, Զ. Խրախունու բնորոշումով «Դարակուտակ սպասումի ու անհնար ըղձանքի , Հողն է(ր) պարարտ»:

7.Ժամանակին նկատվել է, որ արեւմտահայ բանաստեղծներից Վ. Թեքեյանն է ամենից ավելի մոտ արեւելահայ բանաստեղծությանը (Վալերի Բրյուսով), ինչի մասին վկայում են Տերյան-Թեքեյան, Թումանյան-Թեքեյան առնչությունների քննության փորձերը: Մեր կարծիքով այդպիսի միտում կարելի է վերագրել նաեւ Զ. Խրախունու ստեղծագործական շերտերին: Մեր կատարած ուսումնասիրությունները թույլ են տալիս ասելու, որ արեւմտահայ հեղինակը հավասարապես իրենն է համարում նաեւ արեւելահայ գրական ավանդույթը եւ հանդես գալիս իբրեւ համահայկական բանաստեղծական միտումների յուրատեսակ մեկնաբան:

8.Եվս մեկ նկատառում. մեր այս դատողություններով բոլորովին էլ չենք պաշտպանում այն մտայնությունը, թե Զ. Խրախունու ստեղծագործությունը լոկ համեմատությունների ու ազդեցությունների լույսի տակ պիտի դիտել: Նման կապերի ու առնչությունների ճանապարհով է, որ գալիս ենք գրականության պատմության միասնական հունի ճանաչման եւ հաստատումի, որ եթե այս երկու՝ արեւմտահայ եւ արեւելահայ բաժանումները պայմանական տարբերություններ են դրսեւորում, ապա բանաստեղծական «գաղափարի» միջուկի եւ լեզվական-ոճական համամասնությամբ, ինչը, կարծում ենք, մեր մշակութային հարստության գրավականներից է:

Չմոռանանք, որ Զ. Խրախունու ստեղծագործական համակարգը, կարելի է ասել, էապես արժեւորվել է նաեւ արեւելահայ երգի հետագծով, այսինքն՝ այնտեղից, որտեղից ծնունդ են առել Թումանյանի, Տերյանի, Չարենցի, Պ. Սեւակի եւ բանաստեղծական հարուստ էպիզմի ակունքները: Ժողովրդի ճակատագրի ու ազգային երազի փնտրտուք, ժամանակի ու դարաշրջանի, ազատության եւ կամքի փիլիսոփայական քննության փորձ, արվեստագետի առաջնորդող դերի ըմբռնում. ահա այն, ինչ պոլսահայ բանաստեղծը ժառանգել է նախորդներից ու վարպետ գրչով այսօր արդեն, արձանագրենք, կտակում է նորահաս սերնդին:

© National Library of Armenia

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. «Զարեհ Խրախունու «Հարցարան» ժողովածուի հարցադրումները, Հայագիտական հանդես, թիվ 2-3 (8-9), Եր., 2008, 87-92:
2. «Հովհաննես Թումանյանը՝ արեւմտահայերենի հորձանքում», ժողովածու ՀՊՄՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցորդների եւ գիտաշխատողների 54-րդ գիտաժողովի նյութերի (2009 թ. նոյեմբերի 19-21), I պրակ, Եր., 2010, էջ 231-233:
3. «Առարկայական խորհրդանշապաշտություն. Զարեհ Խրախունին՝ շարժման ակունքներում» (խորհրդանիշների նորագույն համակարգի կեսդարյան հանգրվանին), Հայկազյան Հայագիտական Հանդես, հատոր Լ., Բեյրութ, 2010, էջ 231-243:
4. «Պատմության այլաբանական քննակերպը Զ. Խրախունու բանաստեղծություններում», Գրական Սփյուռք - 2011 տարեգիրք, Եր., 2011, էջ 338-347:
5. «Պարույր Սեւակ - Զարեհ Խրախունի. համեմատական վերլուծություն 20-րդ դարի էպիկական երգի հատկանիշների շուրջ», «Վէմ» համահայկական հանդես, 2012 հունվար – մարտ, թիվ 1 (37), էջ 51-61:
6. «Թումանյան-Խրախունի». «մայր գծի» հոլովույթում», Հայկազյան Հայագիտական Հանդես, հատոր ԼԲ., Բեյրութ, 2012, էջ 113-129:

АБРААМЯН КНАРИК АРМЕНОВНА

Зарэ Храхуни и восточно-армянская литература.
Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук
по специальности 10.01.02 „Армянская литература новейшего периода".
Защита состоится 26 апреля 2013 года, 12:30 на заседании специализированного совета армянской и зарубежной литературы 003
Института литературы имени М.Абегяна НАН РА
по адресу: г.Ереван, ул. Григора Лусаворича, 15

Работа посвящена творческим связям Зарэ Храхуни и восточноармянских поэтов.

Во Введении обосновывается важность сранительного литературоведения, необходимость целостного исследования западноармянской и восточноармянской литературы, определяется методология работы, объем рассматриваемого материала, история вопроса, структура диссертации.

В первом параграфе („Особенности новейшей стамбульской армянской поэзии") первой главы („Поэтический мир З. Храхуни") дается общая характеристика стамбульской армянской послевоенной поэзии, противоречивое отношение к ней, сформировавшееся в литературоведении. Здесь мы кратко обращаемся к страницам биографии и творчества З. Храхуни. Во втором параграфе („Верность восточноармянской традиции"), посредством исследования творческих связей З. Храхуни и восточноармянских писателей классического периода, мы попытались выявить те факторы, которыми новейшая стамбульская армянская литература обеспечила преемственность с западноармянской литературой предшествующего периода.

Вторая глава („З. Храхуни и восточноармянские поэты классического периода") состоит из двух параграфов - „Туманян-Храхуни: видоизменение „магистральной линии" и „Терьян-Храхуни: позиции комментирования судьбы родины". Поэтический диалог Ов. Туманяна и З. Храхуни утверждается в нескольких направлениях, с интереса стамбульского армянского поэта к творческому миру Туманяна, с поисков человеческих бытийных основ, общих подходов к национальным вопросам до философских заключений и теоретических эпических поисков. Мы не склонны понимать в прямом смысле влияние В. Терьяна на стамбульского армянского поэта. Возможно, это воздействие можно свести к отношениям читателя-Храхуни и поэта-Терьяна, в которых связь читатель-поэт проявляется как составляющая формирования художественного вкуса.

То, что З. Храхуни живо интересовал мир Терьяна, доказывается также тем обстоятельством, что он обращается к Терьяну в поэме „Тень и эхо".

Вторая глава („З. Храхуни в сравнениях с авторами новейшего периода") состоит из трех параграфов. В первом („Чаренц-Храхуни: в границах

© National Library of Armenia

„эпического" рассвета") – мы попытались показать, что в творческой системе З.Храхуни „присутствие" Е.Чаренца исходит не из формального-выразительного сходства, а из общности в смысления истории, творческих задач. И совсем не обязательно, чтоб эти „общие задачи" сводились также к общим подходам.

Во втором параграфе („П. Севак-Храхуни: связь „непоэтический поисков" национальной песни") нашей практической целью было, по возможности, обобщить теоретико-творческие схождения З. Храхуни и П.Севака.

В третьем параграфе („З.Храхуни и вопросы литературного поколения 70-х годов"), следуя совету поэта-теоретика Храхуни о том, что „дело исследователей-критиков – выявление взаимных связей и общности", мы обратились также к армянским поэтам Ирана и Армении, в частности к поколению, заявившему о себе в 70-е годы.

В результате написания кандидатской диссертации „З. Храхуни и восточноармянская поэзия" мы пришли к следующим выводам:

1.Стамбульская армянская поэзия своими характерологическими чертами выделяется из традиционного русла истории армянской литературы и с первого взгляда кажется отдаленной от процессов предшествующей западноармянской, тем более – восточноармянской литературы. Это искусство, отчасти подпитываемое новейшими европейскими литературными течениями, несмотря на новаторский характер поэтической формы, на тенденцию впечатлить простыми, незатейливыми образами, на предпочтения к кажущимся необычными, „непоэтичными" предметам, в глубине своей является частью истории армянской литературы, более того, выступает как непосредственная наследница роскошной восточноармянской литературы.

2.Эта новейшая поэзия, берущая начало в творчестве Карписа Чанчикяна и Айказуна Галустяна, благодаря таким художникам, как Захрат и З. Храхуни, на берегах Босфора переросла в литературное движение.

3.З.Храхуни в статье „Магистральная линия" (1959), давая определение стамбульской армянской литературе, пришел к выводу, что она, в первую очередь, связана с западноармянскими писателями, со стимулами, исходящими от творчества Д. Варужана, В. Текеяна и Матевоса Зарифяна. Творчество З. Храхуни – лучшее доказательство этой преемственности.

4.Новейшее литературное движение выделилось на всей территории Спюрка и, перерастая чисто „местное" значение, распространило свое влияние и за пределами Стамбула – на Ближнем Востоке и в Соединенных Штатах Америки (Зарэ Мелконян), во Франции (Хилда Галфаян-Паносян, в определенной степени – Григор Плтян), в Иране (Галуст Ханенц, Зорайр Мирзаян), ощутимой эпической струей проявилось также в Армении (Ованес Григорян, Артем Арутюнян, Генрик Эдоян).

5.Самая существенная особенность, выделяющая Храхуни в едином тексте истории армянской поэзии, – это ее философская струя. Он наилучшим

образом смог перенести в художественную сферу интуитивный метод познания, идеи воли и свободы французского философа Анри Бергсона.

6.Философское восприятие воли и свободы З. Храхуни усвоил в двух аспектах: один определяя как волевые действия творца-художника, что проявляется в свободном выборе и многократном употреблении предметов и символов, т.е. в „предметном символизме", а второй – как провозглашение свободы родины и народа, как предчувствие будущего.

7.В свое время отмечалось, что из западноармянских поэтов В.Текеян был ближе всех к восточноармянской поэзии (Валерий Брюсов). Об этом свидетельствуют попытки исследования связей Терьян-Текеян, Туманян-Текеян. Мы считаем, что эту тенденцию можно обнаружить также в пластах творчества З. Храхуни.

8.Еще одно замечание. Из сказанного, конечно, не следует делать заключение, что творчество Храхуни мы рассматриваем лишь в свете сопоставлений и влияний. Именно по ходу выявления подобных связей и схождений мы приходим к познанию и утверждению общего русла истории литературы.

Творческая система поэта по сути оценена также в ретроспекции развития восточноармянской поэзии, т.е. у нее те же питающие ее истоки богатых поэтических эпических традиций, которые характерны для Туманяна, Терьяна, Чаренца, П. Севака.

© National Library of Armenia

Knarik Armen Abrahamyan

Zareh Khrakhouni and Eastern Armenian Literature

Dissertation for obtaining the degree of Candidate of Philology in the speciality 10.01.02 "Modern Armenian Literature"

The defense of the Dissertation will take place on April 26, 2013 at 12.30 at a session of 003 specialized council of Armenian and Foreign Literature at the Institute of Literature after M. Abeghyan, National Academy of Sciences of RA: 15 Grigor Lusavorich str., Yerevan, Armenia

Summary

The dissertation is devoted to the Constantinople-based Armenian writer Zareh Khrakhouni and his literary relations with Eastern Armenian writers.

The Introduction draws upon the significance of Comparative Literature, the essence of proportional analysis of Eastern and Western Literature, the methodology of the work, as well as the length of the development of the material under consideration, the history of the subject matter and the structure of the thesis.

The first chapter entitled "Zareh Khrakhouni's poetic world" has two subchapters. The first one "The characteristic features of Modern Constantinoplean-Armenian Poetry" gives a clear-cut discussion of general description of postwar Constantinoplean-Armenian Poetry with special reference to contradictory atmosphere that was formed against it in the Literary Criticism.

This subchapter bears a brief account of the biographical details about Zareh Khrakhouni's professional life.

Through the second subchapter entitled "True to the traditions of Western Armenian Literature" we have made an attempt to bring out those factors which have allowed to provide Modern Constantinoplean- Armenian Poetry with ground for Literary continuity. This was made possible by means of the literary relations between Zareh Khrakhouni and other Western Armenian writers of classical period.

The second chapter of the dissertation, "Zareh Khrakhouni and Eastern Armenian poets of classical period" is also subdivided into two subparts: "Tumanyan-Khrakhouni – within the current of "Magisterial line" and "Teryan-Khrakhouni – means of interpretation of the motherland's fate".

The poetic colloquy between Hovhannes Tumanyan and Zareh Khrakhouni is accomplished in several ways: namely the Constantinople-based Armenian writer Tumanyan's mere interest towards the creative world, the search for human existence, the universal approach to the national question, as well as philosophical reflections, theoretical and epic scrutiny.

We are not inclined to take for granted the notion that the author has been influenced by the Constantinople-based Armenian writer Vahan Teryan. It can be suggested that this impact is a kind of relationship between the reader Khrakhouni and the poet Teryan, and the connection between the reader and the writer is illustrated as part of a formation of literary palate. The fact that Zareh Khrakhouni has reverberated

Vahan Teryan in his poem "Shadow and Echo" can also be considered as evidence that the author was greatly interested in this writer.

The third chapter of the thesis, "Zareh Khrakhouni in comparison with Modern writers", is comprised of three subchapters: we have tried to show that the "presence" of Yeghishe Charents in the system of Khrakhouni's literary heritage is accounted for not by the fact of formal – expressive points of similarity but by means of the community of literary statements and historical meaningfulness. This does not necessarily mean that the "community of literary statements" must eventually lead to community of approaches. This thesis is formulated in the first subchapter entitled "Charents-Khrakhouni: within the limits of "epic" dawn".

The practical aim of the second subchapter, "Paruyr Sevak - Zareh Khrakhouni: "plead for non lyrical scrutinies" of the national poetry" is to bring out theoretical and literary points of similarity between Zareh Khrakhouni and the Armenian poet Paruyr Sevak.

The third subchapter, "Zareh Khrakhouni and the question of the literary generation of the 70s" is a reference to the Iranian-Armenian poets and the Armenian generation that was on the literary arena during the 70s. We have drawn on the following advice made by the poet and theorist Zareh Khrakhouni. "The task of the literary critics is to bring out influences and similarities".

The following conclusions have been drawn from the dissertation "Zareh Khrakhouni and Eastern Armenian Literature":

1. Modern Constantinoplean-Armenian Poetry with all its characteristic features stands out from the traditions of the history of Armenian Literature, and at first sight it seems to be estranged from the literary currents of Western Armenian Literature in general and Eastern Armenian Literature in particular. This art, which has been nourished from Modern European literary currents, is deeply enrooted in the history of Armenian Literature. Moreover, it is the immediate successor of the splendid Western Armenian Literature. This is achieved in spite of the fact that this art has a preference for the novelty of poetic form, the tendency to make an impression by simple, unvarnished images and seemingly odd, "non-poetic" objects.

2. Thanks to such writers as Zahrat and Zareh Khrakhouni, this Modern Poetry, initiated by Karpis Chanchikyan and Hajkazun Galustyan, developed into a literary movement along the coasts of Bosphorus.

3. In his article "Magisterial line", published in 1959, the author, trying to evaluate the Constantinoplean-Armenian Literature, came to the conclusion that it is closely connected with the impulses that come from Western Armenian writers, such as Daniel Varujan, Vahan Tekeyan, Matevos Zarifyan. The works of Zareh Khrakhouni are the best demonstrations of this literary heritage.

4. This Modern Literary Movement stood out on the whole territory of Diaspora and obtaining a greater than local meaning extended its influence outside Constantinople, namely The Near East and the USA (Zareh Melkonyan), France (Hilda Galfayan-Panosyan, to some extent Grigor Pltyan), Iran (Galust Khanents, Zorayr Mirzayan) and with a considerable epic mainstream, it exerted its influence in Armenia as well (Hovhannes Grigoryan, Artem Harutyunyan, Henrik Edoyan).

© National Library of Armenia

5. The most significant feature distinguishing Zareh Khrakhouni from the Armenian Poetry is the philosophical mainstream. The author was able to perceive and implement the intuitive method of world outlook and the ideology of will and freedom within the literary framework of the French sophist Anry Bergson.

6. Zareh Khrakhouni's disposition of the philosophical understanding of will and freedom was two-fold: one for the actions of the writer conditioned by will which were accomplished by means of the free choice and multiple usage of objects and symbols, or rather "object symbolism", the other one being an appeal for the freedom of the country and its nation as a presentiment of the future.

7. It has been duly noticed that of all the Western Armenian writers Vahan Tekeyan stands closest to the Eastern Armenian Poetry (Valery Brusov). This is accounted for by the attempts of analysis of relations between Teryan-Tekeyan, Tumanyan-Tekeyan. We firmly believe that Zareh Khrakhouni's literary heritage adheres to the same tendency.

8. One more consideration: it must not be inferred from the above-mentioned that Zareh Khrakhouni's works are analyzed merely within the frame of comparisons and influences. It is thanks to these relations and connections that we reach the recognition and establishment of a unified stream of the history of Literature.

The author's literary works have also been evaluated from the viewpoint of the Eastern Armenian Poetry. In other words, it has been nourished by the same source which has marked the splendid epic traditions of Tumanyan's, Teryan's, Charents' and P. Sevak's Poetry.

LIMUSH PRINTHOUSE

Տպագրված է «ԼԻՄՈՒՇ» ՍՊԸ-ի տպարան
Տպաքանակ՝ 50:

ՀՀ Ազգային գրադարան
NL0569460

© National Library of Armenia

© National Library of Armenia